

Նախնական մաքսային հայտարարագրման ինստիտուտից օգտվելու համար՝

1. հայտարարատուն պետք է հանդիսանա ԱԱՀ վճարող,

2. մաքսային հայտարարագրի գրանցման օրվան նախորդող 365 օրվա ընթացքում հայտարարատուի կողմից ներմուծված ապրանքների մաքսային արժեքի ընդհանուր գումարի առնվազն 50 տոկոսը պետք է որոշված լինի մաքսային արժեքի որոշման 1-ին մեթոդով:

Նախնական մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարագայում, տնտեսվարողին հնարավորություն է ընձեռնվում օգտվելու նախնական մաքսային հայտարարագրման հետևյալ առավելություններից.

1. Նախնական մաքսային հայտարարագրերի մաքսային ձևակերպումները իրականացնել ցանկացած օր, 24 ժամյա աշխատանքային գրաֆիկով, առանց որևիցե լրացուցիչ վճարներ իրականացնելու,
2. նախնական մաքսային հայտարարագրերով հայտարարագրված ապրանքները ներմուծող տրանսպորտային միջոցների ՀՀ սահմանը հատելու հետ կապված մաքսային գործառնությունները և մաքսային մարմինների կողմից իրականացվող այլ գործառնությունները կիրականացվեն հենց սահմանային մաքսային կետերում, ընդ որում՝ դրանք կիրականացվեն **արտահերթ**,
3. նախնական մաքսային հայտարարագրերով ձևակերպված ապրանքների զգալի մեծամասնության բացթողումը իրականացվելու է անմիջապես սահմանային կետից, ցանկացած օր, 24 ժամյա աշխատանքային գրաֆիկով, որի դեպքում ապրանքները անմիջապես կտնօրինվեն տնտեսվարողի կողմից, սահմանային կետից ապրանքների բացթողնման դեպքում այլևս կարիք չի լինի ապրանքները տեղակայել երկրի ներսում գտնվող ժամանակավոր պահպանության պահեստներում, այցելել մաքսատուն վարչություններ, ինչի շնորհիվ կխնայվեն տնտեսվարողի ֆինանսական միջոցները և ժամանակը: